# «Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հունիսի 8-ի թիվ 667-Լ որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ

**ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՈՐՈՇՈՒՄ**

«——» «——————»2020թվականի№----Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹ**
**ՅԱՆԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018ԹՎԱԿԱՆԻՀՈՒՆԻՍԻ8-Ի №667-ԼՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի34-րդ հոդվածով Հայաստանի Հանրապետությանկառավարությունըորոշումէ.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հունիսի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակարգը հաստատելու մասին» N 667-Լ որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումները`

- 1) 30-րդ կետում «նախարարական կոմիտեի նիստում» բառերից հետո լրացնել հետևյալ նախադասությունները`

«Նախանիստը, նիստը վարողի նախաձեռնությամբ, կարող է անցկացվելնաև հեռավար`առցանց ռեժիմով: Հեռավար նիստերը անցկացվում են առցանց հարթակի միջոցով` ապահովելով նիստին ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց հասանելիությունը, տեսակապը և նիստի արդյունավետ անցկացման համար անհրաժեշտ այլ տեխնիկական հնարավորություններ:»:

- 2) լրացնել 45.1-րդ կետ հետևյալ բովանդակությամբ`

«45.1. Կոմիտեի նիստերը կարող են անցկացվել նաև հեռավար` առցանց ռեժիմով: Հեռավար նիստերը անցկացվում են առցանց հարթակի միջոցով` ապահովելով նիստին ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց հասանելիությունը, տեսակապը և նիստի արդյունավետ անցկացման համար անհրաժեշտ այլ տեխնիկական հնարավորություններ:»:

- 3) 65-րդ կետը լրացնել հետևյալ նախադասությամբ՝ «Վարչապետի հանձնարարությամբ նիստը կարող է անցկացվել նաև հեռավար՝ առցանց ռեժիմով: Հեռավար նիստերը անցկացվում են առցանց հարթակի միջոցով՝ ապահովելով Կառավարության անդամների և Կառավարության նիստին ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանցիասանելիությունը, տեսակապը և նիստի արդյունավետ անցկացման համար անհրաժեշտ այլ տեխնիկական հնարավորություններ:»:

2. Վարչապետի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, ապահովել սույն որոշմամբ սահմանված նիստերի հեռավար անցկացման տեխնիկական հնարավորությունը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: